ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.12.2020թ.

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՈՐՈՇՈՒՄ
ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/117

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանս, ուսումնասիրելով թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/117 բողոքի քննության շրջանակներում ՀՀ դատախազության կողմից 30.11.2020թ.-ին ներկայացված թիվ «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը մասնակի՝ բացառությամբ ներկայացված բողոքի վիճարկման առարկա հանդիսացող ընթացակարգի 7-րդ չափաբաժնի, կասեցումից հանելու վերաբերյալ միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բողոքով ներկայացված փաստական, իրավական հիմքերը և պահանջը վերաբերում են ընթացակարգի 7-րդ չափաբաժնին, ինչպես նաև ելնելով հանրային շահերից,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ներկայացված միջնորդությունը բավարարել:

ՀՀ դատախազության կարիքների համար համակարգչային սարքավորումների և IP հեռախոսների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հանել կասեցումից, բացառությամբ ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**